# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մ. Ս. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

*Ներկայումս կարևորագույն գերխնդիր է այն, թե Հայաստանի Հանրապետությունը աշխարհում ընդունված որ տնտեսական մոդելով է առաջ շարժվում կամ եթե քայլում է իրեն բնորոշ մի ճանապարհով, ապա ինչպես է հարաբերվում կամ ինչ առնչություն ունի դրա հետ։*

*Այս տեսանկյունից անհրաժեշտ է ամրագրել, որ առավել հայտնի են 4 հիմնական մոդելներ։ Դրանք են՝*

1. Ամերիկյան մոդելը, *որը հիմնված է ձեռնարկատիրական ակտիվության համընդհանուր խրախուսման, բնակչության առավել ակտիվ մասի հարստանալու, խթանման համակարգի վրա։ Սոցիալական հավասարության խնդիր այստեղ ընդհանրապես չի դրվում։ Այս մոդելը կառուցվում է աշխատանքի արտադրողականության բարձր մակարդակի և անձնական հաջողության հասնելու զանգվածային կողմնորոշման վրա։*

2. Ճապոնական մոդելը, *որը բնորոշվում է բնակչության կենսամակարդակի (այդ թվում աշխատավարձի) հետ մնալով աշխատանքի արտադրողականության աճից։ Դրա հաշվին արտադրանքի ինքնարժեքը իջնում է, և բարձրանում դրա մրցունակությունը միջազգային շուկայում։ Արգելքներ գույքային շերտավորման դեմ չկան։ Այս մոդելը գործում է միայն բարձր ազգային ինքնագիտակցության, հասարակական ազգային շահերի գերակայության պայմաններում։*

3. Շվեդական մոդելը, *որը հիմնվում է ակտիվ սոցիալական քաղաքականության վրա, որն ուղղված է ազգային եկամտի վերաբաշխման հաշվին գույքային անհավասարության կրճատմանը՝ հօգուտ հասարակության անապահով խավերի։*

*Այս դեպքում պետության ձեռքին է կենտրոնացված հիմնական ֆոնդերի ընդամենը 4 %-ը, իսկ պետական ծախսերի ծավալը կազմում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 70 %-ը, որի կեսը ուղղված է սոցիալական խնդիրների լուծմանը։ Բնականաբար, դա հնարավոր է միայն հարկման բարձր նորմերի պայմաններում։*

*Այս մոդելը կոչվում է «Ֆունկցիոնալ սոցիալիզացիայի» համակարգ, որտեղ արտադրության ֆունկցիան դրված է մասնավոր ձեռնարկություններին, իսկ կենսամակարդակի ապահովման (նաև զբաղվածության, կրթության, սոցիալական ապահովության) և ենթակառուցվածքային շատ տարրերի (տրանսպորտ, գիտություն) ֆունկցիան՝ պետության վրա։*

4. ԳՖՀ-ի սոցիալական շուկայական տնտեսություն, *որը հիմնված է բոլոր տեսակի (մեծ, միջին, փոքր) ձեռնարկությունների կայուն զարգացման հնարավորության վրա։ Ի դեպ, առավել մեծ աջակցություն են ստանում փոքր և միջին ձեռնարկությունները։ Պետությունը ակտիվորեն ազդում է գների, հարկերի և տուրքերի, ինչպես նաև տեխնիկական նորմերի վրա։*

Այսպիսով, ո՞ր ճանապարհով է գնում այսօր մեր հանրապետությունը։

*Կարծում ենք, վերոհիշյալ չորս մոդելներից էլ որոշակի տարրեր պարունակվում են ՀՀ-ում իրականացվող ներկա սոցիալ-տնտեսական քաղաքականության մեջ, սակայն, ինչ խոսք, այս խնդրում էական ազդեցություն ունեն ՀԲ-ի և ՄԱՀ-ի ներկայությունն ու երաշխավորությունները։*

Դրա հետ միասին հստակ կարելի է նշել, որ հանրապետությունն այսօր գտնվում է անցման շրջանի էկոնոմիկայի պայմաններում: Իսկ ինչքա՞ն ժամանակ է պահանջում անցման շրջանի տնտեսությունը: Այս հարցի պատասխանը կախված է զուտ տնտեսական, քաղաքական (նաև պաշտպանական), սոցիալական, գոյապահպանական և այլ գործոնների ազդեցությունից:

Զուտ տնտեսական առումով խնդրի լուծումն առավելապես կախված է՝

ա) Սեփականաշնորհման և ապապետականացման արդյունավետ ու հաջող ավարտից,

բ) ՀՀ արտահանման կարողության մեծացումից,

գ) Ներդրումային և տարածաշրջանային ակտիվ դաշտի ձևավորումից,

դ) Շուկայական (նաև ֆինանսական) և արտադրական գործող ենթակառուցվածքների առկայությունից,

ե) Ստվերային տնտեսության ծավալների կրճատումից ու պետական բյուջեի շեշտակի աճից,

զ) Տնտեսական օրենսդրության (այդ թվում՝ հակամենաշնորհային, հարկային, բանկերի և բանկային գործունեության, օտարերկրյա ներդրումների պաշտպանության և այլն) իրական դաշտի և կիրարկման հնարավորություններից,

է) Մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների պահանջվող մակարդակի ապահովումից (ՀՆԱ, Համախառն ազգային արդյունք (ՀԱԱ), ազգային եկամուտ և այլն):

Բավականաչափ էական նշանակություն ունեն համախառն ներքին արդյունքի և համախառն ազգային արդյունքի ճիշտ հաշվարկը և դրանից օգտվելը, որովհետև ճիշտ և նպատակահարմար, նաև հավաստի ցուցանիշից է կախված հետագա որոշումների ընդունումը: Այսպես, եթե ՀՆԱ-ի մասին խոսելիս (1 միլիարդ 600 մլն դոլար)[1] չենք կարող չանդրադառնալ դրա կառուցվածքին (ընտանիքների սպառման բարձր տեսակարար կշիռ, ինվեստիցիաների գրեթե բացակայություն), ՀՆԱ-ի իջեցված մակարդակին, ապա ՀԱԱ-ի հաշվարկը պաշտոնական և ծառայողական տեղեկատվություններում չի հանդիպում: Ինչո՞ւ: Բավականին հզոր և բարդ գործոն են ՀՀ մոտ 600—700 հազ. քաղաքացիների արտագաղթը և գործունեությունը արտերկրում, հատկապես Ռուսաստանի Դաշնությունում:

Ինչպես հայտնի է տնտեսական ցուցանիշների և հատկապես Ազգային հաշիվների համակարգի մեթոդաբանությունից, ՀԱԱ-ն տարբերվում է ՀՆԱ-ից տվյալ տարածքից դուրս աշխատող, սակայն տվյալ բնակչության մեջ գրանցված և [illegible] հանդիսացող անձանց եկամուտների ծավալով:

Ուստի, եթե որպես հենք ընդունենք նույնիսկ 500—600 հազ. քաղաքացիների առկայությունը արտերկրում, և նրանցից 300 հազ. աշխատող լինելու փաստը (ամսական 500—1000 դոլար եկամտի միջին ցուցանիշով), ապա կունենանք՝

300 հազ. մարդ × 750 դոլար × 12 ամիս = 2 մլրդ 700 մլն դոլար:

Եթե ընդունենք, որ՝

1) ամսական 10—14 մլն դոլար կամ տարեկան մոտ 150—200 մլն դոլար ուղարկվում է ՀՀ՝ որպես օգնություն ընտանիքներին,

2) Արտագաղթածների որոշ մասը վերադարձավ Հանրապետություն՝ որոշակի գումարներով, որոնք ներդնում են [illegible] այստեղ,

3) Արտագաղթածների մի մասը, զուգահեռ աշխատելով դրսում, նաև ՀՀ-ում է որոշակի ներդրումներ կատարում (սեփականաշնորհմանը մասնակցելով, անշարժ գույք ձեռք բերելով և այլն):

Այս ցուցանիշներին գումարելով

---

1 Տե՛ս ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 1997 թ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության վարչություն, 1998, էջ 1:

ՀՀ-ում միջազգային վարկերի իրացման ծավալները (մոտ 300 մլն դոլար), որոնց մի մասը ուղղակի խթանեցին շինարարության, ագետի գումու (բեռնատար ավտոմեքենայի, կոնցեսիոն վարկ) պահանջարկը։

Դոլարատնտեսություն, դրամի կայունացման (դումարներ դրվեցին բանկային և փոխանակման կետերի համակարգում), սեփականաշնորհման և այլ ոլորտներում, ակնհայտ են ներքին վերաբաշխման ենթակա ռեսուրսները։ Դրանց հաշվին անուղղակի ձևով ֆինանսավորվեցին աշխատատեղեր, աճեց առաջարկը տարբեր շուկաներում, աճեց պահանջարկը նաև առևտրում։

Որոշակի, բայց բավականին փոքր ծավալի ֆինանսական միջոցներ է ապահովում հայկական արտագաղթը՝ տարեկան 200—300 մլն դոլար (ըստ Լուծյան, մեկ շնչի հաշվով՝ 10 դոլար)։

Համադրելով այս ցուցանիշները ստվերային տնտեսության ծավալների ճաշվարկի մի շարք մեթոդների հետ (գնագոյացնող, լոկոմոտիվ ոլորտներ—տնշարժ գույքի, ավտոմեքենաների, առևտրի սրահների և այլնի)՝ պարզ է դառնում, որ առկա են հսկայական ռեզերվներ ներդրումային դաշտի պաշտոնականացման և պետբյուջեի եկամուտների ավելացման համար[2]։

Այնուհետև վերոհիշյալից՝ անհրաժեշտ է իրականացնել ակտիվ և համալիր արդյունաբերական քաղաքականություն՝

1) Հետևողականորեն մեղմացնել մի շարք սահմանափակող գործոններ.

— տնտեսության միակողմանի կողմնորոշում դեպի նախկին ԽՍՀՄ շուկա,

— արդյունաբերության խիստ կախվածություն ներմուծվող հումքից,

— ՀՀ-ում առավելապես կիսաֆաբրիկատների և կոմպլեկտավորող նյութերի արտադրություն և այլն,

— տնտեսական ռիսկի բարձր աստիճան,

— օգտագործել համարերական առավելությունները որոշ ճյուղերում՝ քիմիական և թեթև արդյունաբերության, ռադիոէլեկտրոնիկայի, ադամանդի մշակման և այլ ոլորտներում (արդյունաբերական կադրային ներուժի առկայություն), հումքի որոշ տեսակների բավարար պաշարներ՝ բնական քարանյութեր, գունավոր մետաղներ, աղ, գրաֆիտ, հանքային ջրեր)։

2) Նոր շուկաների ձևավորման և շուկաների ուսման, մարկետինգի դերի կարևորում՝

— շուկաների սեգմենտավորում և նպատակային սեգմենտների (սպառման ցանկալի խմբերի) հայտնաբերում,

— գովազդի կազմակերպում արտերկրում,

— հայրենական ապրանքների և ծառայությունների առավելագույն ներկայացում (позиционирование) դրսի և ներսի շուկաներում, մուտք նոր շուկաներ։

3) Պետական մասնակցությամբ հզոր համատեղ ֆիրմաների ձևավորում: Կարծում ենք, որ նախկին նյութական ռեսուրսների նախարարության համակարգում ստեղծված «Ռուսար», «Բելար» և այլ տիպի համատեղ ձեռնարկությունները նպատակային կերպով չեն գործում։ Նորաստեղծ համատեղ ֆիրմաները կունենան պետական մի շարք երաշխիքներ՝ հնարավորին չափ կիրառելով մի շարք «արենաստական» մեթոդներ և գուցե կազատվեն տվյալ երկրի հարկերի վճարումից։ Որոշ դեպքերում այդ ֆիրմաները, միջպետական պայմանավորվածությունների համաձայն, կդառնան հանրահայտ և շուկաները գրաված ֆիրմաների ներկայացուցիչներ (դիստրիբյուտորներ, դիլերներ) այլ շուկաներում։ Դրանք կստանան նաև պետական պատվերներ։

4) Ֆինանսաարդյունաբերական խմբերի ձևավորում, որը ինքնավար գործող և, կախված շուկայական կոնյունկտուրայից, ռեսուրսների վերա-

---

[2] Экономика, под. ред. доцента А. С. Булатова, м., 1966.

*բաշխման ակտիվ օրգանիզմ է՝ ներկրողների գործունեության ռիսկի վերա-*
բաշխման *և կառավարման՝ մշակված մեթոդաբանությամբ։*

*5)* Շուկայական ենթակառուցվածքների՝

*— ապրանքահումքային բորսաների գործունեության վերակենդանացում։ Անցած այն տարիները, երբ բրոքերային, միջնորդային ցածր տոկոսը գործարքների ժամանակ էապես ազդում էր պայմանագրերի կնքման վրա։*

*— Ֆոնդային բորսաների ակտիվ գործունեություն, նաև հարաբերությունների ձևավորում՝ դրսի ֆոնդային շուկաների հետ։*

*Անհրաժեշտ է նաև անհապաղ աջակցել* արժեթղթերի առաջնային և երկրորդային շուկաների ձևավորմանը:

*— Ապահովագրական համակարգի իրական կիրարկում,*

*— աջակցություն կոմերցիոն բանկերին, անհրաժեշտ աուդիտից հետո անհուսալի բանկերի լուծարում։*

*6)* Պետական պարտատոմսերի *կիրառման դերի բարձրացում (նաև ոչ պետական ձեռնարկություններում)։ Համապատասխան մրցույթների հրապարակային կազմակերպում։*

*7)* ՀՀ-ում հագեցած առևտրի ոլորտից կապիտալի նպատակաուղղում դեպի արտադրություն:

*Բացի վերոհիշյալ միջոցառումների իրականացումից, կապիտալի տեղափոխման և արդյունավետ ձևը քաղաքակիրթ առևտրական շուկայի՝ հիպեր և սուպեր մարկետների ձևավորումն է՝ համապատասխան սեփական ենթակառուցվածքներով՝*

*— սեփական* կրեդիտ-քարտերով, *որը թույլ կտա նաև սպառողին (միջտական հաճախորդ) անվճարունակ լինելու դեպքում ժամանակավորապես օգտվել հիպեր-մարկետից, որով և ամրակցվում է սպառողը։*

*— Ապրանքաշրջանառության խոշոր ծավալներ և ապրանքների ձեռքբերում՝ էժան մեծածախ գներով։ Արդյունքում առևտրական կապիտալը կուղղվի ոչ միայն արտագրության, այլև՝*

*8)* Դեպի ծառայությունների շուկա: *Ծառայությունների իրականացումը կկազմակերպվի բարձր մակարդակով և կունենա իր հասարակականորեն անհրաժեշտ գինը։*

*Այս ոլորտում կստեղծվեն նոր աշխատատեղեր։*

*Կաշխուժանան նաև կրթական, առողջապահական, սպորտային և այլ ծառայությունների ոլորտները։*

*9)* Ներմուծողական կոնտեյներային *բարձր սակագնի ապահովում, որը թույլ կտա ռացիոնալ կապերի ձևավորում և տեղական պատվերների իրացում։ Այս գործընթացը ուղիներ կհարթի նաև ՀՀ-ում պատրաստի վերջնական արտագրանքի թողարկման փուլը ապահովելու համար։*

*10)* Սեփականության իրավունքի հստակ և ազատ իրացման երաշխիքների ապահովում՝ *սեփականության անձեռնմխելիությամբ,*

Ինտելեկտուալ սեփականության *ակտիվ իրացմամբ դրսի շուկայում՝ հեղինակային իրավունքի, պատենտների, ապրանքային նշանների միջոցով։ Նոր ստեղծված բաժնետիրական ընկերություններում բաժնետերերի մեծ մասը, ըստ էության, ձևական սեփականատերեր են (խոշոր և միջին ձեռնարկություններում), քանի որ իրականում ոչ մի կերպ չեն կարող ազդել ձեռնարկության արտադրատնտեսական գործունեության վրա։ Ներկայումս բաժնետերերի ժողովը իրական մարմին չէ։*

*11.* Գերակայելի ճյուղերի, ենթաճյուղերի և ձեռնարկությունների ճանաչի ճշգրտում՝ կապված ազգային և տնտեսական անվտանգության խնդիրների ապահովման հետ: *Հարկավոր է իրականացնել առաջնահերթ ներդրումային ծրագրերի ապահովում հետևյալ ոլորտներում՝ պղնձաձուլական համալիրում, ոսկու կրկնազտման (աֆինաժի) և մետաղական մոլիբդենի ձեռնարկություններում, քիմիական որոշ արտադրություններում, ռադիոէլեկտրոնային արդյունաբերությունում («Տրանզիստոր» ԳԱՄ-ում ուժային*

կլաստերավորիչների արտադրության կազմակերպում), ադամանդի մշակման և ոսկերչական իրերի արտադրության փոքր ձեռնարկությունների կազմակերպում, շինանյութերի արդյունաբերության ոլորտում՝ քարի ինդուստրիայի կազմակերպում [քարամշակման արտադրության վերականգնում, քարից (տուֆ, պեռլիտ) բազմաթիվ արտադրատեսակների թողարկման տեխնոլոգիաների կիրառում «Քար և սիլիկատներ» ԳԱՄ-ում]:

12. Կառավարության ձեռնարկությունների ֆինանսական առողջացման ծրագրերի բնագավառում, որի նպատակով անհրաժեշտ է իրականացնել անվճարունակության խնդիրների և վիճակի տարանջատում, անվճարունակության հանրապետական մարմնի ձևավորում: Այս տեսանկյունից անթույլատրելի է, որ հարկային տեսչությունը, որպես շահագրգիռ մարմին, կանխորոշի ձեռնարկության կարգավիճակը:

13. Երկրորդային ռեսուրսների (թափոնների) ինդուստրիայի կազմակերպում:

Միայն մակուլատուրայի հավաքումը, մթերումը և դասակարգումը պետության կողմից (պետպատվերների միջոցով), որը կկազմի 0,5 մլն տ, այսօր կապահովեր 100—150 մլն դոլար և այլն: Միայն Երևան քաղաքում տարեկան առաջանում է 1 մլն տ կենցաղային թափոն: Ուստի, անհրաժեշտ է՝

— աղբավերամշակման ձեռնարկության կառուցում, որը կլուծի ինչպես անասնակերի, այնպես էլ կենսաէներգիայի ապահովման խնդիրները[3]:

14. Չնայած ՀՀ-ում գործող ձեռնարկությունները սեփականաշնորհվում են, կառավարությունը՝ վարչապետի գլխավորությամբ պետք է. ամենօրյա լրատվություն ստանա ներդրումային մեծ ներուժ և այդ առումով հեռանկարային ձեռնարկությունների մասին (կենսաապահովող ցիկլի ձեռնարկությունների մասին),

— ունենա նմանատիպ ամենօրյա լրատվություն համաշխարհային և տարածաշրջանային շուկաներում իրավիճակի փոփոխությունների մասին:

Հիմնվելով տնտեսական մեխանիզմների և պետական կարգավորման լծակների (հարկեր, վարկեր, լիցենզիաներ և այլն) պետական երաշխիքների, ինչպես նաև պետական մասնակցությամբ ձեռնարկությունների վրա (և մյուս ձեռնարկությունների)՝ համաշխարհային տարբեր շուկաներում անհրաժեշտ է իրականացնել շահավետ գործարքներ:

15. Հակամենաշնորհային քաղաքականության իրականացում՝

* հակամենաշնորհային մարմնի ձևավորում,
* ոլորտի, շուկաների ոչ մրցակցային ձևով գրավման, գների վերահսկման այլ խնդիրների կարգավորման (ներմուծման արտոնյալ վարկերի ստացում, չհիմնավորված սպասարկություն և այլն) իրավական դաշտ և պաշտպանություն,
* մրցակցության պայմանների ապահովում,
* Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություններում և Վիճակագրությունում պարբերական լրատվություն ՀՀ-ում ստվերային տնտեսության ծավալների մասին և դրա հաշվարկում:

Այսպիսով.

16. ՀՀ կառավարությունը, ունենալով «բնական մենաշնորհ» (տնտեսական լծակներ) և ապահովվելով համապատասխան լրատվությամբ, պետք է իրացնի այն և հանդես գա վարչապետի գլխավորությամբ՝ որպես յուրօրինակ ֆիրմա, որը միջազգային շուկաներում իր գործարքներից շահույթներ կբերի պետական բյուջեին:

Սա նաև պետական պատվերների իրացման ամենաճկուն մեխանիզմներից է:

---

[3] Ավելի մանրամասն տե՛ս Մ. Ա. Մելքումյան, Երկրորդային հումքային ռեսուրսների օգտագործման պրոբլեմը ՀՀ-ում, Ե., 1991, էջ 116—127:

Ամփոփելով, նշենք, որ վերոհիշյալ առաջարկները և նկատառումները պետք է ըստ առանձին ճյուղերի, ենթաճյուղերի և արտադրությունների տեղայնացվեն, ուրեմն դրանց հիման վրա հարկ է մշակել հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման մոդելը: Վերջինս, այնուամենայնիվ, պետք է առավելապես հագեցած լինի հայկական-ազգային տնտեսության բնորոշ բովանդակությամբ:

## О НОВОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ ПОЛИТИКЕ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

М. С. МЕЛКУМЯН

Резюме

На современном этапе осуществления социально-экономических реформ важное значение приобретает анализ особенностей американской, японской, шведской и немецкой моделей становления и развития рыночных отношений. И в этом аспекте на данном этапе для РА необходимо создание своей модели развития экономики. В контексте последней необходимо немедленное осуществление следующих мероприятий:

1. Сокращение теневой экономики
2. Применение системы национальных счетов
3. Защита отечественных товаропроизводителей
4. Инвенстирование в отраслях—локомотивах
5. Антимонопольная политика и обеспечение конкурентной среды
6. Осуществление роли государства и государственных заказов
7. Формирование финансово-промышленных групп
8. Внутриреспубликанская кооперация
9. Применение системы несостоятельности
10. Обеспечение неприкосновенности собственности.